«Դիլիջան» ազգային պարկը պետական ոչ առևտրային կազմակերպություն է և ստեղծվել է 2002 թ.-ին (փոխարինելով 1958 թ-ին հիմնադրված պետական արգելոցին): Նպատակ՝ հետապնդելով ապահովել լանդշաֆտների և կենսաբազմազանության պահպանումը, համահունչ տնտեսական զարգացումը, ինչպես նաև պատմամշակութային ժառանգության պահպանությունն Աղստև և Գետիկ գետերի ավազաններում: Ազգային պարկի տարածքը կազմում է 33765 հա: Զբաղեցնում է հիմնականում Տավուշի մարզը, փոքր հատվածներով նաև՝ Գեղարքունիկի և Լոռու մարզերը: Ազգային պարկն ունի լավ հնարավորություններ էկոտուրիզմի և բնապահպանական կրթության զարգացման, ինչպես նաև ժամանցի կազմակերպման համար: Պարկը հարուստ է ոչ միայն բնության հուշարձաններով այլ նաև ունի հարուստ պատմամշակութային ժառանգություն, որոնք առանձնահատուկ գրավչություն են տալիս պարկին:
Վաղ քրիստոնեական ժամանակաշրջանի ամենանշանակալից մշակութային հուշարձաններն են Հաղարծինի վանքը (10-րդ 13-րդ դդ.), Գոշավանքը (12-13-րդ դդ.), Ջուխտակ վանքերը (11-րդ, 13-րդ դդ.), Մաթոսավանքը (10-13-րդ դդ.), Աղավնավանքի եկեղեցին (11-րդ դ.):

"Dilijan" National Park is a state non-commercial organization that was established in 2002, replacing the state reserve established in 1958. Its aim is to ensure the preservation of landscapes and biodiversity, promote consistent economic development, and protect the historical and cultural heritage of the Aghstev and Getikriver basins. The territory of the national park covers 33,765 hectares, primarily located in Tavush Province, with small parts extending into Gegharkunik and Lori provinces. The national park offers excellent opportunities for the development of ecotourism and environmental education, also as well as for entertainment activities. It is not only rich in natural monuments but. possesses a significant historical and cultural heritage, which adds to its appeal. The most notable cultural monuments from the early Christian period include the Haghartsin Monastery (10th-13th centuries), Gosavank (12th-13th centuries), Jukhtak Monastery (11th-13th centuries), Matosavank (10th-13th centuries), and Aghavnavank Church (11th century).

***ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն***
***«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ***

**"DILIJAN NATIONAL PARK" State**
**Non-Commercial Organization**
**MINISTRY OF ENVIRONMENT**
**OF THE REPUBLIC OF ARMENIA**

1

***Մաթոսավանք.*** *Միջնադարյան այս հուշարձանախմբում իրար կից երեք կառույց կա՝ եկեղեցին, գավիթը և գրատունը: Սբ.Աստվածածին եկեղեցին կառուցվել է 13-րդ դարում Ավագ Զաքարյանի՝ Իվանե Զաքարյանի որդու կողմից: Մուտքի երկու կողմերում տեղադրված են քանդակազարդ խաչքարեր և ձևավոր բեկորներ:*

2

***Ջուխտակ վանք.*** *Ջուխտակը վանական համալիր է՝ բաղկացած երկու եկեղեցուց՝ Սբ.Գրիգոր Լուսավորիչ և Սբ.Աստվածածին, այստեղից էլ ժողովրդական անվանումը՝ ջուխտ (զույգ): Առաջին եկեղեցին կառուցվել է 11-րդ դարում, երկրորդը՝ 1201թ. Սարգիս ճարտարապետի կողմից:*

1

***Matosavank:*** *This medieval complex consists of three adjacent structures: the church, the courtyard, and the library. St. Astvatsatsin Church was built in the 13th century by Avag Zakaryan, the son of Ivane Zakaryan. Sculpted khachkars and decorative fragments are positioned on both sides of the entrance.*

2

***Jukhtak Monastery:*** *Jukhtak is a monastic complex consisting of two churches: St. Grigor Lusavorich and St. Astvatsatsin, which gives rise to its popular name, 'ukht' (meaning couple). The first church was built in the 11th century, while the second was constructed in 1201 by the architect Sargis.*


Հասցե՝ ՀՀ, Տավուշի մարզ, Դիլիջան համայնք,
Թբիլիսյան խճուղի 2,
հեռ. +374 60 717121, +374 268 27032
էլ.փոստ:dilijansnco@env.am
Կայք: https://www.env.am


*Տպաքանակը 100 հատ*


Building 2, Tbilisyan Highway,
Dilijan, Tavush Province,
Republic of Armenia
Phone: +374 60 717121, +374 268 27032
E-mail: dilijansnco@env.am
Website: https://www.env.am


*Print run: 100 copies*



***ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԿԱԶՄ***
*Ռոբերտ Ալիխանյան «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրեն*
*Դավիթ Առուստամյան Գիտության մշտադիտարկման զբոսաշրջության բաժնի պետ*
*Մարիամ Գուլինյան Մոնիտորինգի մասնագետ*
***ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ***
*Անուշ Խաչատրյան*

***AUTHOR STAFF:***
*Robert Alikhanyan - Director of Dilijan National Park SNCO;*
*Davit Arustamyan - Head of the Science, Monitoring, and Tourism Department;*
*Mariam Gulinyan - Monitoring Specialist*
*TRANSLATION:*
*Anush Khachatrian*


«Դիլիջան» ազգային պարկի
քայլարշավային արահետներ,
պատմամշակութային հուշարձաններ
Tourist informational booklet about the
hiking trails, historical and cultural
monuments of
"Dilijan" National Park

# Զբոսաշրջային արահետներ
# Tourist trails

## Միջնադարյան վանքերի արահետ

## Medieval Monasteries Trail

## Միջնադարյան վանքերի արահետ

Երկարություն՝ 3,8- 2,3 կմ
Տևողություն՝ 1ժամ 45րոպե
Տեսակ՝ երրկողմանի
Բարդություն՝ միջին
Բացարձակ բարձրություն՝ 1401-1520
Ուղղորդիչ նշաններ՝ առկա
***Տեսարժան վայրեր՝***
*Ջուխտակ վանք(11-13-րդ դդ.),*
*Մաթոսավանք(11-13-րդ դդ.),*
*Խաչքարեր*

## Medieval Monasteries Trail

Length of the trail: 2.3 - 3.8km
Estimated duration: 1 hour 45 minutes
Trail type: two-way
Difficulty level: medium
Elevation range: 1401 - 1520 m
Directional signs: available

***Attractions:***
*Jukhtak Monastery (11th-13th centuries),*
*Matosavank (11th-13th centuries),*
*Khachkars*













### Պայմանական նշաններ:
### Conventional symbols:

- քայլարշավի մեկնարկ / start of the hike
- քայլարշավի ավարտ / end of the walk
- քայլարշավային արահետի մեկնարկ / start of the hiking trail
- հասարակական բիոզուգարան / public bio-toilet
- հանգստյան գոտի / recreation area
- միջնադարյան կառույց / medieval structure